

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԶԱԼԱԼԻ ՄԵՅՅԵԴ ՄԱԻԴ ՄԵՅՅԵԴ ՀԱՄԶԵ

ՀԱՅԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ
ԻՐԱՆԻ ՄԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆԸ
(1905–1911 թթ.)

Է. 00.01 «Հայոց պատմություն» մասնագիտությամբ պատմական
գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման
ատենախոսության սեղմագիր

ԵՐԵՎԱՆ – 2011

Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի պետական համալսարանում:

ԳԻՏԱԿԱՆ ՂԵԿԱՎԱՐ՝

պատմական գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր, Աբրահամյան Հ. Մ.

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴԴԻՄԱԽՈՍՆԵՐ՝

պատմական գիտությունների դոկտոր
Խուդինյան Գ. Ս.

պատմական գիտությունների թեկնածու
Վարդանյան Թ. Ռ.

ԱՌԱՋԱՏԱՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ՝ ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտ

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2011 թ. դեկտեմբերի 13-ին, ժամը 14⁰⁰-ին ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտում գործող ՀՀ ԲՈՀ-ի 004 մասնագիտական խորհրդում (հասցեն՝ 0019, ք. Երևան, Մարշալ Բաղրամյան 24/4):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2011 թ. նոյեմբերի 12-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար
պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ

Մուրադյան Հ. Ղ.

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

ԹԵՄԱՅԻ ԳԻՏԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆ ՈՒ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Իրանի սահմանադրական հեղափոխությունը դասվում է Ասիայի և Արևելքի երկրներում 20-րդ դարում տեղի ունեցած առաջին հեղափոխությունների շարքում: Այս հասարակական-քաղաքական շարժման հաղթանակում իրենց դերակատարությունն են ունեցել տարբեր հոսանքների պատկանող ազգային և վերազգային ուժեր: Իր մեջ բազում մշակույթներ, դավանանքներ և հնուց ի վեր իրար կողք կողքի խաղաղ գոյություն տանող ցեղեր ընդգրկող այս երկրում մի շարք ցեղեր և էթնիկական խմբեր նույնպես գործուն դեր են ունեցել այս հեղափոխության կայացման գործում: Իրանի տարբեր պատմական ժամանակաշրջաններում, իշխող քաղաքանությունը մշտապես բխել է իշխող գաղափարախոսությունից, իսկ կրոնական համոզմունքներն և դավանանքները սովորաբար համարվում էին իշխանության օրինականությունը հիմնավորող միջոց: Թեպետ այս երկրի պատմական ավանդույթներին համապատասխան կրոնական փոքրամասնությունների նկատմամբ բավականին հանդուրժողական և հարգալից վերաբերմունք էր տիրում իրանական հասարակության մեջ, սակայն քաղաքականության ասպարեզում նրանց ներկայությունը համարվում էր յուրօրինակ տաբու: Մա հատկապես վերաբերում էր այնպիսի կրոնական և ազգային փոքրամասնություններին, ինչպիսիք են հայերը, ասորիները, հրեաները և գրադաշտականները:

Այս համայնքները սակավաթիվության և թույլ ազդեցության պատճառով, մշտապես փորձում էին մի կողմ քաշվել պատմական իրադարձությունների կիզակետից: Այդ իսկ պատճառով նրանք չէին միջամտում քաղաքական գործերին և երբևէ աչքի չեն ընկել որպես քաղաքական և հասարակական գործընթացների գործուն մասնակիցներ: Այնուամենայնիվ, սահմանադրական հեղափոխության ընթացքում ազգային փոքրամասնությունների դերն ակնառու և բազմաբնույթ էր: Այս առումով Իրանի հեղափոխությունը բացառիկ էր այս երկրի համար: Մինևույն ժամանակ ուրիշներին համեմատ հայերի դերն այս իրադարձությանը ավելի մեծ էր:

Իրանի սահմանադրական շարժմանը նրանց բազմակողմ ներկայության հիմնական պատճառներից կարելի է թվարկել հեղափոխության շրջանում սոցիալ-քաղաքական պայմանները, նրանց՝ մյուս իրանցիների հետ հավասար իրավունքներ ունենալու ձգտումը, ինչպես նաև ստեղծված յուրօրինակ միջազգային դրությունը և շարժմանը մասնակից դառնալու Հայաստանի քաղաքական և ռազմական խմբերի մտադրությունը:

Այսպիսով Իրանի սահմանադրական հեղափոխությանն ակնառու մասնակցություն են ունեցել մի շարք հայկական խմբավորումներ: Նրանցից առաջիններն Իրանում ապրող հայերն էին, որոնք երկարատև երկմտանքներից հետո վերջիվերջո միացան հեղափոխականներին և վերջիններիս արժանի տնտեսական և քաղաքական օժանդակություն ցուցաբերեցին: Իրանի հայկական կարևորագույն կազմավորումը Թավրիզի սոցիալ-դեմոկրատների խմբավորումն

եր: Այս խումբը աշխարհում ծագած սոցիալիստական շարժումների ազդեցության տակ սկսեց իր գործունեությունն Իրանում: Իրանի սահմանադրական հեղափոխության մասնակիցներ են համարվում նաև հնչակյանները և դաշնակցականները:

Այն օրերի սոցիալիստական գաղափարներով վարակված քաղաքական մթնոլորտում, մի շարք խմբավորումներ հարելով սոցիալիստներին և կոմունիստներին, սկսեցին համագործակցել միջազգային տարբեր ուժերի հետ և համախմբվեցին ցարական կայսրության կողմից սատարվող Ղաջարների բռնապետության դեմ՝ ի փառս Իրանի ժողովրդի ազատատենչ իղձերի իրականացման:

Դժբախտաբար սահմանափակ աղբյուրներից գատ, այս խմբավորումների մասնակցության ուղիների, խթանների և պատճառների վերաբերյալ որևէ լուրջ ուսումնասիրություն չի իրականացվել և հեղափոխությանն առնչվող հիմնական աղբյուրների մեծ մասը նույնպես բավական չէ պատմության այս մույժ կողմերը լուսաբանելու համար: Նյույթի սակավաթիվ լինելու մասին է խոսում այն փաստը, որ հեղափոխության դարաշրջանի ժամանակակից էդվարդ Բրաունը, որը առաջին հայացքից բազմաթիվ հուշեր ունի գրած հեղափոխության մասին և որը կապի մեջ է եղել մի շարք հեղափոխական ուժերի հետ, իր պատմական գրքում չնչին հիշատակություններ է բերում աստեղախոսության թեմայի վերաբերյալ: Նա նույնիսկ Թեհրանի գրավումից հետո ոստիկանության առաջին ղեկավար Եփրեմ Խանին ներկայացնում է “Էֆրայիմ Սաիդ”¹ անհայտ անվամբ, այն դեպքում, երբ թե՛ հակառակորդների, թե՛ համախոհների կարծիքով Իրանի սահմանադրականների հաղթանակի գործում Եփրեմ Խանը համարվել է կարևորագույն գործոններից մեկը: Հայերի ներգրավվածության մասին նման լրության և խղճուկ լուսաբանման պատճառները տարբեր են, որոնցից կարևորագույնը կարելի է համարել բոլշևիկյան գաղափարախոսության հակահնչակյան և հակադաշնակցական ուղղվածությունն սովետական պատմագրական աղբյուրներում, հայ խմբավորումների ներքին տարաձայնությունները, ինչպես նաև հեղափոխությունից հետո Իրանի պատմագրության մեջ իշխող նացիոնալիզմը:

Թեմայի ընտրությունը պայմանավորված է Իրանի սահմանադրական հեղափոխության ընթացքում հայերի դերի մասին համակողմանի և անաչառ ուսումնասիրություն կատարելու անհրաժեշտությամբ, ու թեև աստեղախոսը աղբյուրների սակավաթիվությամբ պայմանավորված բախվել է մի շարք դժվարությունների, նա փորձել է օգտագործել վերոհիշյալ ժամանակաշրջանի քաղաքական և հասարակական գործիչների հուշերը, զեկույցներն ու նամակները և այլ փաստաթղթեր և այսպիսով, ձեռնամուխ լինելով այս աղբյուրների մանրակրկիտ հետազոտմանը, փորձել լրացնել այս բացը:

¹Brown E., The Persian Revolution of 1905-1909, London, Cambridge University Press, 1966, p. 327.

Մյուս կողմից սույն ատենախոսության նշանակությունը կայանում է նրանում, որ հայ գիտական շրջաններին է ներկայացվում Իրանի տարբեր արխիվներում պահվող հայերի վերաբերյալ բազմաթիվ վավերագրեր և փաստաթղթեր, որոնք մինչ այժմ անհասանելի են եղել մեր գիտական շրջաններին:

ԱՏԵՆԱՆՈՍՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

- Լուսաբանել հայերի ներդրումը Իրանի հասարակական քաղաքական կյանքում սահմանադրական հեղափոխությանը անմիջապես նախորդող շրջանում և հեղափոխության նախապատրաստման փուլում:
- Բացահայտել Իրանում հեղափոխական շարժման ընթացքում կուսակցությունների առաջացման գործում հայերի դերակատարությունը:
- Քննել կոմկապան սոցիալիստների և Թավրիզում առաջացած իրանահայ սոցիալ-դեմոկրատների գործունեությունը ի նպաստ սահմանադրական հեղափոխության սկզբնական հաղթանակի:
- Բացահայտել Հնչակյան կուսակցության և Իրանում նրա առաջնորդ Գրիգոր Եղիկյանի դերը սահմանադրական հեղափոխությունում:
- Բացահայտել Դաշնակցության գործունեությունը և Եփրեմ խանի դերը հեղափոխության սկզբնական հաջողության գործում:
- Լուսաբանել սահմանադրական հեղափոխությունում հայկական տարբեր խմբերի ակտիվ մասնակցության հիմնական դրոշապատճառները, հետապնդած նպատակները և ձեռք բերած արդյունքները:

ԱՏԵՆԱՆՈՍՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԿԱՆ ՆՈՐՈՒԹՅՈՒՆ

Ներկայացված թեման կարելի է ասել, որ առաջին անգամ է առկա գրեթե բոլոր աղբյուրների և հատկապես պարսկալեզու վավերագրերի, փաստաթղթերի, թերթերի, նամակների և հուշագրերի հիման վրա բազմակողմանի ուսումնասիրության և վերլուծության առարկա դառնում:

Աղբյուրագիտական նյութի վերլուծությունը ցույց է տալիս, որ հայերի ներկայությունը և ազդեցությունն Իրանում Մեֆյան շրջանից ի վեր մի քանի փուլ է անցել և գուտ տնտեսական և մշակութային գործոնից 19-րդ դարի երկրորդ կեսից և 20-րդ դարի սկզբին վերածվել է նշանակալի քաղաքական և հասարակական գործոնի:

Շահ Աբբասի կողմից հայ ազգաբնակչության հսկայական խմբեր Իրանի հյուսիսային և կենտրոնական շրջաններ բռնագաղթեցնելուց հետո հիշյալ շահը մեծ տնտեսական արտոնություններ արտոնություններ շնորհեց նրանց. հայերի ձեռքում կենտրոնացավ Իրանի արտահանման գլխավոր ապրանքի՝ մետաքսի միջազգային առևտուրը: Ձեռք բերելով հսկայական կապիտալներ և տնտեսական անկախություն իրանահայ առևտրականները ձեռնամուխ եղան հայ համայնքի քաղաքական, հասարակական և մշակութային կյանքի զարգացմանը և արդեն Ղաջարական շրջանում Նասրեդդին շահի օրոք Իրանի ներքին և արտաքին քաղաքական դաշտում հայտնվեցին շատ ազդեցիկ հայեր, ինչպիսիք են Միրզա Մալքում խանը, Ջան Դավուդ խանը, Ավանս խան Մասիսյանը և ուրիշներ: Այս գործիչները մեծապես նպաստեցին եվրոպական լուսավորչական նոր

գաղափարների ներմուծմանը Իրան և սահմանադրական հեղափոխության նախապատրաստմանը:

Հայկական տարբեր խմբերը սահմանադրական հեղափոխությանը ուշացումով միացան, ինչը պայմանավորված էր Ղաջարական արքունիքի հետ սերտ կապերով և նրանց ընձեռված արտոնություններով: Այնուամենայնիվ ատենախոսը հիմնվելով փաստաթղթերի և վավերագրերի հաղորդած տեղեկությունների վրա ապացուցում է, որ Իրանում սոցիալիզմի գաղափարների առաջին կրողն ու տարածողը Թավրիզի հայ սոցիալ-դեմոկրատների խմբավորումն էր՝ Չիլինգարյանի և Տիգրան Դերվիշի գլխավորությամբ:

Ատենախոսը անդրադառնալով Հնչակյան կուսակցության գործունեությանը, իրավամբ առաջին անգամ հիմնվելով աղբյուրագիտական նյութի վրա լուսաբանում է այս կուսակցության ականավոր գործիչ և առաջնորդ Գրիգոր Եղիկյանի դերը Իրանում և հատկապես Գիլանում սոցիալիստական գաղափարների տարածման և, ի տարբերություն դեմոկրատականների, հասարակությունում ներքնից փոփոխություններ կատարելու և քաղաքացիական և արհեստակցական կառույցների ստեղծման գործում:

Ատենախոսության մյուս առանձնահատկությունը կայանում է նրանում, որ հստակ լուսաբանվում է հայկական մյուս կուսակցության՝ «Դաշնակցության» դերակատարությունը հեղափոխությունում, ըստ որի այս կուսակցությունն ուներ ավելի իրատեսական և գործնական մոտեցում, ուստիև առավել գործուն ներդրում ունեցավ հեղափոխության նախնական հաջողության մեջ: Այս համատեքստում հատկանշական է Եփրեմ խանի գործունեության կարևորությունը, որն ըստ ատենախոսի ցայժմ արժանի ուշադրության և պատշաճ գնահատանքի չի արժանացել: Հատկապես նշվում է Եփրեմի հսկայական ներդրումը Թեհրանի գրավման, ոստիկանական և այլ պահապան ուժերի ստեղծման և սկզբնական շրջանում սահմանադրական ձեռքբերումների պահպանման և կարգուկանոն ապահովելու գործում:

ԹԵՄԱՅԻ ԿԻՐԱՌԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆ

Թեմայի գործնական նշանակությունը կարևորվում է հասկանալու համար Ասիայում տեղի ունեցած առաջին և կարևոր հեղափոխություններից մեկում հայերի և հատկապես հայ կուսակցությունների մասնակցության և դերակատարության խնդիրները հայ-իրանական պատմական առնչությունների համատեքստում:

Ատենախոսության նյութը և տվյալները կարող են օգտագործվել հայ-իրանական պատմական առնչություններով զբաղվող մասնագետների կողմից, հեղափոխությունների պատմությամբ և հասարակական շարժումների ուսումնասիրությամբ հետաքրքրվող հետազոտողների կողմից, ինչպես նաև Իրանի նոր պատմության դասընթացներում: Թեմայի հիմնական դրույթները կարող են օգտակար լինել նաև պատմական այդ լարված ժամանակաշրջանում Կովկասում և Իրանում հայկական կուսակցությունների գործունեության հետ կապված որոշ օրինակափոխությունների ուսումնասիրման համար:

Ատենախոսության եզրահանգումները կարող են օգտակար լինել ընդհանրապես Իրանի նոր և նորագույն պատմության որոշ կարևորագույն հիմնախնդիրների բացահայտման գործում:

ԹԵՄԱՅԻ ՄԵԹՈՂԱԲԱՆԱԿԱՆ ՀԻՄՔԸ

Ատենախոսությունը գրելիս կիրառվել է պատմության ուսումնասիրման հիմնական մեթոդներից նկարագրական-վերլուծական մեթոդը, որը հիմնված է առկա աղբյուրներում պատմական իրադարձությունների նկարագրության և դրանց համեմատական վերլուծության եղանակով պատմական ճշմարտություններն առավելագույնս բացահայտելու վրա: Որոշ դեպքերում կիրառվել է նաև բացատրական-վերլուծական մեթոդը, որը նախատեսում է որևէ տեսության շրջանակներում պատմական իրողության բացատրումն և ստենախոսի վերլուծությունը:

Ատենախոսության նյութը և տվյալները հավաքագրելիս կիրառվել է արխիվային-փաստաթղթային և գրադարանային մեթոդը:

ԹԵՄԱՅԻ ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆ ՄԱՀՄԱՆՆԵՐԸ

Թեմայի հիմնական ժամանակագրական սահմաններն ընդգրկում են 20-րդ դարի առաջին տասնամյակի Իրանի սահմանադրական հեղափոխության շրջանը, ավելի ստույգ 1905-1911թթ.: Սահմանադրական հեղափոխության և դրանում հայերի դերակատարության վերաբերյալ առավել համապարփակ և հիմնավորված վերլուծություն կատարելու համար ատենախոսը պատմական անդրադարձ է կատարել Մեֆյան շրջանից մինչև սահմանադրական հեղափոխության ժամանակաշրջանն ընկած հայ-իրանական առնչություններին:

ԹԵՄԱՅԻ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ

Հայաստանի Հանրապետության և միջազգային գիտական հանդեսներում լույս են տեսել ատենախոսության բովանդակությունն արտացոլող երեք հոդվածներ: Ատենախոսությունը քննարկել և պաշտպանության համար երաշխավորել է ԵՊՀ պատմության ֆակուլտետի Հայաստանի հարակից երկրների պատմության ամբիոնը:

ԹԵՄԱՅԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾՈՒԹՅԱՆ ԱՍՏԻՃԱՆԸ. ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՏՆՍՈՒԹՅՈՒՆ

Ատենախոսությունը գրվել է պարսկերեն, հայերեն, անգլերեն և ռուսերեն տարաբնույթ սկզբնաղբյուրների և ուսումնասիրությունների և հատկապես պարսկերենով գրված արխիվային փաստաթղթերի, վավերագրերի, նամակների և հուշերի հիման վրա: Ատենախոսությունը գրելիս օգտագործվել է Իրանի ազգային արխիվային ընկերության, Իրանի Մեջլիսի թանգարանի և արխիվային կենտրոնի, Հայաստանի ազգային արխիվի, Մատենադարանի և որոշ անհատական արխիվների վավերագրեր և փաստաթղթեր: Այս շարքում հատկապես կարևոր են Իրանի ազգային արխիվային ընկերության² և Իրանի Մեջլիսի թանգարանի և արխիվային կենտրոնում³ պահվող վավերագրերը, որոնք

² Sazmane Asnade Melli Iran.

³ Muze va Markaze Asnade Majlese Shoraye Eslami.

օգնում են բացահայտել թեմային վերաբերող կարևոր շատ խնդիրներ և լուսաբանում ցայժմ աղոտ մնացած որոշ հանգամանքներ:

Մատենադարանի և անհատական արխիվների վավերագրերը օգնում են բացահայտել թեմայի նախապատմության և հայ-իրանական առնչությունների պատմության հետ կապված խնդիրներ, ինչը կարևոր նշանակություն ունի թեմայի համապարփակ ուսումնասիրության և հիմնավոր ուսումնասիրության համար:

Իրանի սահմանադրական հեղափոխության վերաբերյալ կարևոր ուսումնասիրություն է Հուրի Բերբերյանի «Հայերը և Իրանի սահմանադրական հեղափոխությունը 1905-1911թթ.» գիրքը⁴, որը թեև անդրադառնում է անմիջականորեն ատենախոսության թեմային, սակայն նրանում օգտագործված չեն սույն աշխատանքի հիմքը կազմող կարևորագույն վավերագրերն ու փաստաթղթերը: Այնուամենայնիվ այն կարևոր ուսումնասիրություն է և մեծապես օգնել է ատենախոսին թեմայի որոշ խնդիրներ լուսաբանելիս:

Աշխատանքի երկրորդ մասի, այսինքն «Իրանական սոցիալիզմը և հայ սոցիալ-դեմոկրատների դերը Իրանական սահմանադրական հեղափոխության» համար կարևոր նշանակություն է ունեցել Մոհամադ Հոսեյն Խոսրովփանահի խմբագրությամբ լույս տեսած «Հայերի դերը Իրանի սոցիալ-դեմոկրատական շարժման մեջ» հոդվածաշարը⁵, որը լուսաբանում է Թավրիզի հայ սոցիալ-դեմոկրատների դերը ընդհանուր հեղափոխական և մասնավորապես Իրանում սոցիալ-դեմոկրատական գաղափարների տարածման գործում:

Թեմայի ուսումնասիրման մեծ նշանակություն ունեն նաև այդ շրջանում Իրանում հրատարակված հետևյալ թերթերը, որոնք տպագրվել են հեղափոխական տարբեր ուժերի կողմից. «Թավրիզի միություն»⁶, «Նոր Իրան»⁷, «Էսրաֆիլի շեփորը»⁸, «Նասրեդդին շահի հուշերը Եվրոպա կատարած առաջին, երկրորդ և երրորդ այցերի վերաբերյալ»⁹ և այլն:

Հնչակյան կուսակցության և Իրանում նրա առաջնորդ Գրիգոր Եղիկյանի գործունեության վերլուծության համար կարևոր է հենց իր՝ Եղիկյանի հեղինակած «Հայրենիքիս համար»¹⁰ և «ԽՍՀՄ-ը և Ջանգյալիների շարժումը»¹¹ գրքերը:

⁴ Berberian H., Armenians and the Iranian Constitutional Revolution of 1905-1911, published in United States of America by West View Press, Colorado and in the United Kingdom by West View Press, 2001.

⁵ Naghshe Aramane dar Social-Democracy Iran, majmueye nameha va maghalat, be kusheshe Mohamad Hosein Khosrovanah, Tehran, Nashre Shiraze 1382/2003.

⁶ Anjomane Tabriz, sale dovom va sevvom, j. 2-3, Tehran, Ketabkhaneye Mellie Jomhuri Eslamie Iran, 1376/1997.

⁷ Irane Nou, Sazmane Asnade Mellie Iran.

⁸ Sure Esrafil, Mirza Ali Dehkoda, Mirza Jahangir Khane Sure Esrafil, Tehran, Roudaki, 1361/1982.

⁹ Khaterate Nasreddin Shah dar safarhaye aval, dovom va sevom Farangestan, be kusheshe Fateme Ghaziha, Tehran, Sazmane Asnade Mellie Iran, Pazhuheshkade Asnad, 1371/1992, 1377/1998, 1379/2000.

¹⁰ Yeghikyan G., Baraye Vatan, Rasht, Irane Kabir.

Իրանի սահմանադրական հեղափոխությունում «ՀՅԴ» և Եփրեմ խանի դերը լուսաբանելու համար կարևոր աղբյուրներ են իրանահայ հեղինակ Արփի Մանուկյանի «Դաշնակցություն կուսակցությունը և սահմանադրական շարժման ընթացքը» գիրքը¹² և Եփրեմ խանի հուշերը, որ շարադրված են նրա հեղինակած «Անզալիից Գիլան» գրքում¹³:

Ատենախոսության տարբեր ասպեկտների ուսումնասիրման համար օգտակար են եղել Ա. Քասրավի¹⁴, Եր. Աբրահամյանի¹⁵, Խ. Շաքերիի¹⁶, Մ. Մալեքզադեի¹⁷, Ա. Ամուրյանի¹⁸ և այլոց ուսումնասիրությունները:

ՍՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ՈՒ ԲՈՎԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսությունը բաղկացած է նախաբանից, չորս գլուխներից, եզրակացությունից և օգտագործված գրականության ցանկից:

Առաջաբանում հիմնավորված է թեմայի ընտրության կարևորությունը, արդիականությունը, պատմաճանաչողական, գիտական և կիրառական նշանակությունը, ներկայացվում ժամանակագրական սահմանները, առաջադրվում նպատակներն ու խնդիրները, ինչպես նաև բնութագրվում է ատենախոսության հենքը կազմող պատմագիտական գրականությունը:

Առաջին գլուխը՝ «Իրանի հայ համայնքը Սահմանադրական հեղափոխության նախօրյակին» բաղկացած է չորս ենթաբաժիններից՝ «Հայերի դերը Իրանի սոցիալ-տնտեսական կյանքում», «Քաղաքական անկայունության շրջանն Իրանում և հայ համայնքի կրած լուրջ վնասները», «Իրանահայ համայնքի տնտեսական և հասարակական դիրքերի ամրապնդումը Ղաջարական շրջանում», «Սահմանադրական հեղափոխության սկիզբը և իրանահայ համայնքը»:

Դարեր շարունակ վկայվել է հայերի գոյությունը Իրանական բարձրավանդակի ընդարձակ տարածքներում: Հնուց ապրելով Իրանի տարբեր մասերում՝ նրանք ազդեցիկ քաղաքական և տնտեսական գործունեություն են ծավալել իրենց բնակության վայրերում: ¹⁹ Սակայն Իրանի տնտեսական և հասարակական կյանքում ազդեցությունը նրանք ձեռք բերեցին գլխավորապես Սեֆյանների դարաշրջանում: Սեֆյանները, հիմնվելով սրբազան պատերազմի և ռազմի ավանդույթի վրա, որն սկիզբ է առել իրենց նախնիների ռազմական պրակտիկայից, հանուն Աստծո և ընդդեմ անհավատների արշավանքները էին

¹¹ Yeghikyan G., Shouravi va Jonbeshe Jangal, be kusheshe Barzuye Dehgan, Tehran, Nashre Akhtar, 1386/2007.

¹² Manukyan A., *Hezbe Dashnak va Nehzate Mashrute*, Tehran, Entesharate Ramrang, 1383/2004.

¹³ Eprem Khan, *Az Anzali ta Gilan*.

¹⁴ Kasravi A., *Tarikhe Mashruteye Iran*, Tehran, Amir Kabir, 1370/1991.

¹⁵ Abrahamian E., *Iran between two Revolutions*, Princeton University Press, New Jersey.

¹⁶ Shakeri Kh., *Pishinehaye eghtesadi-ejtemayie jonbeshe Mashrutiyat va enkeshafe Social-Democracy*, Tehran, Nashre Akhtar, 1384/2005.

¹⁷ Malekzade M., *Tarikhe Mashrutiyate Iran*, Tehran, Elmi, 1371/1992.

¹⁸ Amuryan A., *Hemaseye Eprem*, be kusheshe Hrair Khalatyan, Tehran, Chape Khushe, 1354/1975.

¹⁹ Hoveyan A., *Armanyan-e Iran*, Tehran, Hermes, 1384/2005, pp. 5-11..

ձեռնարկում դեպի Կովկաս:²⁰ Շահ Թահմասպի նման քաղաքականություն վարելու արդյունքում բազմաթիվ հայեր և վրացիներ հայտնվելով Իրանում՝ հիմնեցին գաղթօջախներ:²¹

Այդպիսի մի արշավանքի ժամանակ, որը տեղի ունեցավ օսմանյան ուժերի հարձակումներն ու զավթումները կանխարգելելու նպատակով, Շահ Աբբաս I Հայաստանից մեծ թվով բնակիչներ տեղահանելով բռնագաղթեցրեց Իրան:²² Կիրառելով տարածքներն այրելու պրակտիկան՝ նա Ջուղայի հայ բնակիչներին մասսայաբար տեղահանեց և բնակեցրեց մայրաքաղաք Սպահանում:²³

Չնայած կրած աղետալի տառապանքներին, Իրանի շահի բանիմացության արդյունքում հայերն ազատվեցին գերության լծից և ստացան իրենց տանջանքների դիմաց արժանի փոխհատուցում: Հայ գաղթականների բնակեցումը երկրի հյուսիսային և հարավային բերրի տարածքներում, հատկապես քաղաքացիության իրավունքի վերականգնումը և կարևոր տնտեսական արտոնությունների ընձեռումն այս տառապած հասարակությանը վերածեց սոցիալապես և տնտեսապես ծաղկուն մի համայնքի: Հովանավոր շահի մահը թեև որոշ դժվարությունների առիթ հանդիսացավ, սակայն դարձավ հայերի սոցիալ-տնտեսական անկախության և առավել հզորացման պատճառ: Հայ առևտրականները իրենց ձեռքում էին կենտրոնացրել Իրանի արտահանման գլխավոր ապրանքի՝ մետաքսի միջազգային առևտուրը:²⁴ Նրանք ճամփորդում էին ամբողջ աշխարհով մեկ և կարևոր ու կենսական կապեր հաստատում ժամանակի տնտեսական կազմակերպությունների հետ: Ըստ էության այս պայմանները հայերին առանձնացնում էին իրանական հասարակությունում, և նրանց պատկանող հողերն ու սեփականությունը և դրանցում արտադրվող բարիքները թե՛ Սեֆյան շրջանում, թե՛ 18-րդ դարում և թե՛ հատկապես Ղաջարական շրջանում հիմնականում հատուկ կարգավիճակ ունեին և չէին մտնում թիյուկ սեփականության ձևի և «ասիական արտադրական եղանակի» մեջ, ինչի վառ օրինակը Նասրեդդին շահի օրոք Իրանի հյուսիսում և հարավում բնակվող հայերի հարկերից ազատումն էր:²⁵ Հետագայում հատկապես 18-րդ դարի քաղաքական խժոժությունների ժամանակաշրջանում հայերի փոքրաթիվ համայնքը մեծ վնասներ կրեց, սակայն հայ եկեղեցու և նրա հետ կապված հաստատությունների առաջնորդությամբ, որոնք միայն կրոնական գործունեությամբ չէին զբաղվում, Իրանից ելած և աշխարհով սփռված հայ առևտրականների հովանավորությամբ, ինչպես նաև հետագայում հայ տեխնոկրատների աջակցությամբ կարողացավ հաջողությամբ ազատվել սոցիալ-

²⁰ Savory R., *Iran under the Safavids*, Cambridge University Press, 1980, pp. 17-18.

²¹ *Ibid*, pp 62-63, ինչպես նաև տե՛ս Rumlu, Hasan, Ahsan al-Tavariikh, be kusheshe Abdul Hosein Navai, Tehran, 1349/1970, pp. 318-320.

²² Munshi, Eskandarbek, *Alam Ara-ye Abbasi*, be kusheshe Iraj Afshar, Tehran, Amikabir, 1335/1956, p. 665.

²³ Falsafi, Nasr Allah, *Shah Abbas Aval*, Tehran, Entesharat-e elmi, 1364/1985, pp. 1112-1115.

²⁴ Chardin's, John, *Travels in Persia*, London, the Argonaut Press, pp. 279-282.

²⁵ Issawi Ch., *The Economic History of Iran 1800-1901*, Chicago University Press, 1966, p. 44.

տնտեսական ծանր վիճակից և արդեն Ղաջարական դարաշրջանում նորից վերականգնել իր դիրքերը: Ղաջարների ժամանակաշրջանում և հատկապես Նասրեդդին շահի օրոք հայերից շատերին հաջողվեց տնտեսական ձեռքբերումների և ֆինանսական հզորացման շնորհիվ մուտք գործել տարբեր բնագավառներ, այդ թվում և քաղաքական ասպարեզ: Նրանց թվին էին պատկանում այդ ժամանակաշրջանի ականավոր քաղաքական գործիչներ ու մտավորականներ, ինչպիսիք են Միրզա Մելքոմ խանը, Ջան Դավուդ խանը, Նարիման խանը, Ավանս խան Մասիայանը և այլոք: Նշված գործիչները որպես դիվանդետներ և թարգմանիչներ նպաստում էին եվրոպական արժեքների մուտքը Իրան և երկու կողմերի միջև հարաբերությունների խորացմանը:

Ղաջարական արքունիքին մոտ գտնվելը և Նասրեդդին և Մոզաֆարեդդին շահերի օրոք մեծ ազդեցության ձեռքբերումը, ինչպես նաև մահմեդականների հետ հնարավոր բախումների հրահրումը պայմանավորում էին իրանահայերի երկմտությունը Իրանի սահմանադրական հեղափոխությանը սկզբնական շրջանում միանալու խնդրում: Սակայն Մոհամմադ Ալի շահի օրոք իրանահայ համայնքը միացավ հեղափոխությանը և արժանի օժանդակություն ցուցաբերեց իրանցի սահմանադրականներին՝ էլ ավելի բարձրացնելով իր հասարակական և քաղաքական դիրքերը:

Երկրորդ գլուխը՝ «Հայ սոցիալ-դեմոկրատների դերը Իրանի Սահմանադրական հեղափոխության ընթացքում» բաղկացած է երեք ենթաբաժիններից՝ «Թավրիզի հայ սոցիալ-դեմոկրատները», «Իրանի դեմոկրատական կուսակցությունը և Թավրիզի սոցիալ-դեմոկրատները» և «Իրան-է Նոու» թերթը և Տիգրան Դերվիշի հրապարակախոսական գործունեությունը»:

Պատմական աղբյուրների ուսումնասիրությունը թույլ է տալիս պնդել, որ իրանցիները առաջին անգամ առնչվեցին սոցիալիզմին Նասրեդդին շահի ժամանակաշրջանում: Այդ շրջանում Իրանում սոցիալիզմին տարբեր ձևակերպումներ էին տրվում հիմնականում այն կապելով նիհիլիստների, անհավատների և բաբիստների հետ:²⁶ Սակայն աստիճանաբար իրանցիները ծանոթացան սոցիալիզմի գաղափարախոսությանը և նպատակներին: Այսպես, Ղաջարական շրջանում իրանցիները ուսում ստանալու նպատակով Եվրոպա մեկնելով տեղի քաղաքական գործիչների և մտավորականների հետ շփվելով նրանք սկսեցին քիչ թե շատ ընկալել վերոնշյալ գաղափարախոսության և հասարակարգի դրույթները, ինչի արդյունքում մի քանի թերթեր և ամսագրեր տպագրվեցին Իրանում:

Այնպիսի գործիչներ, ինչպիսիք էին Մելքոմ խանը, Մոսթաթ օլ-Դուլեն, Աղախան Քերմանի Յահյա Դուլաթաբադին, Մոհամեդ Հոսեյն Ամին Օլ-Ջարբը և այլոք իրենց գործունեությամբ նպաստեցին նաև սոցիալիզմի գաղափարների տարածման Իրանում²⁷:

²⁶ Adamiyat F., Fekre democracy ejtemayi dar nehzate mashrute, Payam, Tehran, pp. 5-8.

²⁷ Tabatabai Seyed Javad, Hokumate Ghanun dar Iran, Tabriz, Sotude, 1386/2007, pp. 13-20.

Այնուամենայնիվ իրանցիները սկզբնական շրջանում կասկածանքով և մակերեսորեն էին մոտենում սոցիալիզմին , ինչը մոլորության պատճառ էր դառնում: Այս ամենը հանգեցնում էր նրան, որ նրանք ոչ ճիշտ էին պատկերացում այս գաղափարախոսությունը և այն կապում էին երկրի ներսում իրենց հայտնի դավանանքների և շարժումների հետ:

Սոցիալիզմը կարճ ժամանակում Իրանում դարձավ հիմնական քաղաքական ուղղություն և Իրանում ի հայտ եկան տարբեր սոցիալիստական կուսակցություններ և խմբեր, որոնց արմատները պետք էր փնտրել Իրանի հարևան Կովկասյան տարածաշրջանում, և որոնք գտնվում էին Ռուսաստանի ու Կովկասի հզոր հեղափոխական գաղափարական քարոզչության ազդեցության տակ:

Ինչպես նշվեց իրանական սոցիալիզմը մեծապես գտնվում էր Կովկասյան տարածաշրջանում ձևավորված սոցիալիստական խմբավորումների ազդեցության տակ: Նախքան իրանցիների միգրացիոն շարժումները դեպի Կովկաս այստեղ ծանոթ չէին սոցիալիզմի հետ, սակայն հատկանշական է այն, որ Իրանում առաջինը իսլամական երկրներից ձևավորվեցին սոցիալ-դեմոկրատական կուսակցություններ:²⁸

Կովկասում գտնվող մեծ թվով իրանցի աշխատավորները, համալրվելով տեղի սոցիալիստական խմբերի շարքերում, սկսեցին հող նախապատրաստել Իրանում իրենց գործունեությունը սկսելու համար: Բաքվում ստեղծված «Հեմմաթ» սոցիալիստական կուսակցության աջակցությամբ իրանցիները ստեղծեցին իրենց կուսակցությունը, որը կոչվեց «Էջթեմայունե ամիյուն»: Սակայն այս կուսակցությունը գտնվելով կովկասյան սոցիալիստների մեծ ազդեցության տակ այդպես չկարողացավ Իրանի ժողովրդի շրջանում իրեն հենարան ստեղծել: Նրանք իրենց գործելակերպում իրատեսական չէին և շատ հաճախ նույնիսկ դիմում էին պայքարի ոչ դեմոկրատական մեթոդների, ինչպիսիքն են տեռորը, հակառակորդներին դաժանորեն պատժելը, կուսակցության ստորադասների անվերապահ հնազանդությունը վերադասին:

Թեև Իրանում առաջին սոցիալիստական խմբավորում շատերի կարծիքով պետք է համարել հենց վերոհիշյալ «Էջթեմայունե ամիյուն» կուսակցությանը, սակայն ատենախոսը հիմնվելով վավերագրերի և փաստաթղթերի մանրակրկիտ ուսումնասիրման վրա Իրանում առաջին իրական և համոզմունքով սոցիալիստներ է համարում Թավրիզի հայ սոցիալ-դեմոկրատների խմբավորմանը, որոնց շարքերում էին գտնվում Չիլինգարյանը, Վաստ Խաչատուրյանը, Սեդրակ 1-ինն ու Սեդրակ 2-րդը, Տիգրան Դերվիշը և այլք: Թավրիզի սոցիալ-դեմոկրատներ հրատարակում էին թերթեր, գիտական հոդվածներ սոցիալիզմի վերաբերյալ, այսինքն իրավամբ զբաղվում էին այս գաղափարախոսության ուսումնասիրմամբ, այլ ոչ սոսկ կուրորեն կրկնօրինակմամբ: Նրանք նաև նամակագրական կապի մեջ էին գտնվում այդ

²⁸ Shakeri Kh., Pishinehaye eghtesadi-eytemayie jonbeshe mashrutiyat va enkeshaf Social-Democracy, Tehran, Akhtaran, 1384/2005, pp. 30.

Ժամանակվա սոցիալիզմի ակննավոր գաղափարախոսներ Կարլ Կաուցկիի և Պլեխանովի հետ և նրանց խորհուրդները հարցնում Իրանում սոցիալիզմի տարածման և հաղթանակի հնարավորությունների և ձևերի մասին:

Թավրիզի հայ սոցիալ-դեմոկրատների մեջ գոյություն ուներ 2 խմբավորում, որոնցից առաջինը Չիլինգարյանի և Վաստ Խաչատուրյանի գլխավորած մեծամասնությունն էր, իսկ փոքրամասնություն էր կազմում Սեդրակ 2-րդի գլխավորած խումբը, որին հարում էր նաև Տիգրան Դերվիշը: Առաջին խմբի կարծիքով Իրանը արդեն թևակոխել է կապիտալիստական զարգացման ուղին և նրանում ձևավորվել է աշխատավորական դասակարգը և պետք է պայքարել և հաղթանակի հասնել հիմնվելով հենց այդ ուժի վրա: Սակայն ըստ երկրորդ խմբի Իրանը դեռ գտնվում էր կիսաֆեոդալական զարգացման փուլում և նրանում ձևավորված չէր աշխատավորների անհրաժեշտ զանգվածը, ուստի հեղափոխության ժամանակ պետք էր համագործակցել այլ ուժերի և հատկապես դեմոկրատների հետ:

Թեև Թավրիզի հայ սոցիալ-դեմոկրատները բաժանված էին երկու խմբի, սակայն երկուսն էլ անկեղծորեն փորձում էին Իրանում հասարակությանը համահունչ քայլեր ձեռնարկել երկիրը զարգացման նոր փուլ հանելու նպատակով: Թեև որոշ դեպքերում նրանք նաև սխալներ թույլ տվեցին և նրանց մեջ հայտնվեցին շահամոլ և անիրատես անձինք, սակայն հենց այս խմբավորման փոքրամասնության շարքերից համարվեց Իրանի դեմոկրատական կուսակցությունը, ինչպես նաև Թավրիզի հայ սոցիալ-դեմոկրատները գաղափարական մեծ ազդեցություն թողեցին նորաստեղծ դեմոկրատական կուսակցության վրա: Այդ շարքում հատկապես աչքի էր ընկնում Տիգրան Դերվիշը, որը Թավրիզից տեղափոխվելով Թեհրան իր ակտիվ գործունեությամբ մեծապես նպաստեց կուսակցության կայացմանը: Տիգրան Դերվիշը աչքի էր ընկնում իր ակադեմիական կրթությամբ և դարձավ «Նոր Իրան» թերթի մշտական թղթակիցներից մեկը և մեծապես նպաստեց թերթի կայացմանը:²⁹ Հենց Տիգրանը առաջինը իր «Տեոոր» հոդվածով կտրականապես դեմ արտահայտվեց հեղափոխության ընթացքում պայքարի այդ ձևի հետ: Ըստ նրա տեոորը ոչ միայն հեղափոխությանը չէր օգնում, այլև հեղափոխականների թուլացման պատճառ էր հանդիսանում, քանզի նրանցից շատերը ձեռքակալվում կամ մահապատժի են ենթարկվում:³⁰ Շատ դեպքերում հեղափոխականների ընտրած ոչ ճիշտ տակտիկան և արկածախնդրությունը պատճառ էր դառնում նրանց անհաջողության:

Երրորդ գլուխը՝ «Հնչակյանների դերը Իրանի սահմանադրական հեղափոխության ընթացքում» բաղկացած է չորս ենթաբաժիններից՝ «Հնչակյանների գործունեությունը սահմանադրական շարժման սկզբնական շրջանում», «Գիլանի սոցիալ-դեմոկրատները», «Հնչակյան կուսակցության

²⁹ A century of Revolution- Janforan, University of Minnesota Press, 1994, Janet Afari, Social Democracy and Iranian Constitutional Revolution of 1906-1911, p. 37.

³⁰ Ruznameye 'Iran Nou', shomareye 59, 29 zihajje 1328.

առաջնորդ Գրիգոր Եղիկյանի քաղաքական հայացքներն ու գործունեությունը Իրանի սահմանադրական հեղափոխության շրջանում», «Եղիկյանը և նրա դերը Իրանի հասարակական-քաղաքական կյանքում» և «Եղիկյանի դիրքորոշումը հայկական հարցի վերաբերյալ»:

Իրանի սահմանադրական հեղափոխության շրջանում Հնչակյան կուսակցությունը ընդհանուր առմամբ և հատկապես Իրանում խորը ճգնաժամ էր ապրում: Դա կապված էր նրանց գաղափարական դրույթների հակասականության և աղոտության, ներքին անհամերաշխությամբ և հայկական մյուս կուսակցության՝ «Դաշնակցության» հետ մրցակցությամբ, որում դաշնակները որպես ավելի համերաշխ և կազմակերպված ուժ էին հանդես գալիս: Այնուամենայնիվ հնչակները իրենց գործունեությունն Իրանում իրենց մրցակից դաշնակցականների հետ միաժամանակ սկսեցին և նրանց գլխավոր կենտրոնը Թավրիզն էր:³¹

Չնայած որ հնչակյանները Իրանի Թավրիզ և Թեհրան քաղաքներում կանոնավոր կառույցներ ունեին, սակայն այս կուսակցությունը մինչև 1908թ. պաշտոնապես չէր միացել Իրանի սահմանադրական հեղափոխությանը:³²

Նման հապաղմանը նպաստող գործոն կարելի է համարել նրանց, ինչպես նաև այլ հայ խմբավորումների անհանգստությունը կապված կրոնական և ազգամիջյան բախումների հետ, ինչի վառ ապացույցը Կովկասում տեղի ունեցած իրադարձություններն էին: Սակայն երբ 1908 թ. Թավրիզում Սաթարխանի գլխավորությամբ սկսվեցին և ծավալվեցին ժողովրդական հուզումներ, հնչակյաններն այլ հայ կուսակցությունների, ռուս և Կովկասի սոցիալ-դեմոկրատների հետ մեկտեղ հարեցին այս շարժմանը և հայտնեցին Իրանի հեղափոխությանը իրենց գործուն մասնակցության մասին: Հնչակյանները ոչ միայն բանակցում էին Սաթարխանի հետ, այլև համագործակցության պայմանագիր կնքեցին Թավրիզի «Էջթեմայունե ամիյուն» խմբավորման հետ: Սակայն Թավրիզի գրավումը ռուսական զորքերի կողմից խաթարեց հնչակյանների և մյուս հեղափոխական ուժերի ջանքերը: Հեղափոխական պայքարը տեղափոխվեց Գիլան, որն իր աշխարհագրական պայմաններով ավելի նպաստավոր էր հեղափոխականների և հատկապես սոցիալ-դեմոկրատների համար:

Հնչակյանները իրենց գործունեությունը ծավալել էին Իրանի տարբեր նահանգներում, բայց հատկապես աչքի ընկան Գիլանում ձևավորված շարժման մեջ: Գիլանում դաշնակցականների և հատկապես Եփրեմ Խանի ազդեցիկ ներկայության և Թեհրանի գրավման ժամանակ նրա մեծ ներդրման պայմաններում կարծես հնչակյանները, որ կրկին հակասությունների անկումնային շրջան էին ապրում, պետք է չվայելեին ժողովրդական և մտավորական շրջանների վստահությունը: Սակայն նրանց քաղաքական

³¹ Guidor, Ares, Hezbe Social-Democrate Hnchakist va jonbeshe enghelabie Iran, monzamam dar ketabe Naghshe Aramane dar social-democracy Iran 1905-1911, Tehran, Shiraze, 1382/2003, p. 66.

³² Նույն տեղում, էջ 63:

գործունեության համար այս նահանգում հանգամանքները փոխվեցին և նրանք գրավեցին մտավորական և քաղաքական շրջանակների ուշադրությունը: Այս շրջադարձը կապված էր նրանց ականավոր առաջնորդ Գրիգոր Եղիկյանի ակտիվ գործունեությամբ: Նա իրավամբ համարվում է Իրանում ազատության համար պայքարի կարկառուն դեմքերից մեկը: Իրանի նորագույն պատմության մեջ նրա դերը չի սահմանափակվում միայն քաղաքան գործունեությամբ: Նա ակնհայտ ներդրում է ունեցել Իրանում նոր արվեստի ստեղծման և զարգացման, հատկապես հասարակա-քաղաքական թեմաներով թատերական բեմադրություններ և վեպեր գրելու գործում:³³

Գալով Իրան Եղիկյանը Գիլանում սկսեց հրատարակել «Զանգ» թերթը, իսկ էնդեկում հիմնեց «Ռաշիդիե» դպրոցը:³⁴ Եղիքյանը հատուկ նշանակություն էր տալիս անջոմանների, մշակութային և արհեստակցական միությունների գործունեությանը: Այս տեսակետից նրա դիրքորոշումը հակադրվում էր դեմոկրատական կուսակցության դիրքորոշմանը, ըստ որի իշխանությունը պետք է կենտրոնանար վերևում և հասարակական-քաղաքական ինստիտուտները պետք է բարեփոխվեին վերևից: Մյուս կողմից Գիլանում հնչակյանների հաջողության գրավականներից մեկը նրանց ազդեցիկ ներկայությունն էր կրթության բնագավառում, ինչպես նաև արվեստի և թատերական ներկայացումներ կազմակերպելու ոլորտում: Այս առումով կուսակցությունը նույնպես պարտական էր Եղիկյանին: Նա առաջին քաղաքական գործիչն էր, ով պիեսներում խոսեց ազատատենչության մասին՝ նկարագրելով պատմական իրադարձությունները, և մեծ ջանքեր թափեց, որպեսզի ազգային և սոցիալիստական թեմաները բարձրանան թատերական բեմ: Նրա հերոսներն ու պատվածքները համահունչ են իրենց ժամանակաշրջանի հետ: Իր գործունեության մեջ նա անդրադառնում էր նաև կանանց նկատմամբ արևելքում ձևավորված ավանդական վերաբերմունքի քննադատությանը: Կանայք նրա ստեղծագործություններում քննադատ, ազատատենչ և սոցիալիստական գաղափարներով տոգորված կերպարներ էին:

Չորրորդ գլուխը՝ «Դաշնակցությունը և սահմանադրական հեղափոխությունը» բաղկացած է տասը ենթաբաժիններից՝ «Դաշնակցության մուտքն Իրանի սահմանադրական հեղափոխություն և մասնակցությունը Թավրիզի ապստամբությունում», «Դաշնակցությունը Գիլանում», «Եփրեմը խանի գործունեությունը Իրանի սահմանադրական հեղափոխության սկզբնական շրջանում», «Թեհրանի գրավումը սահմանադրական ուժերի կողմից», «Եփրեմ խանը՝ որպես Թեհրանի ոստիկանության (Նազմիե) ղեկավար», «Շեյխ Ֆազլոլլահ Նուրիի մահապատիժը և Եփրեմ խանի դերը», «Տեղական ապստամբությունները և Եփրեմի դերը», «Եփրեմ խանի գործունեությունը Աթաբաք այգու միջադեպից մինչև ռուսների վերջնագրի ներկայացումը»,

³³ Arutin, Aram, Faslnameye Zenderud, shomareye 22, p. 207.

³⁴ Yeghikyan G., Shouravi va Jonbeshe Jangal, be kusheshe Barzuye Dehgan, Tehran, Nashre Akhtar, 1386/2007, p. 196.

«Երկրորդ գումարման մեջլիսի լուծարման մասին վերջնագիրը և Եփրեմի դերը Իրանում սահմանադրական շարժան ձախողման գործում», «Հակասությունների առաջացումը «Դաշնակցության» և Եփրեմ խանի միջև և վերջինիս գործունեության ավարտը»:

Դաշնակցություն կուսակցության հիմնման սկզբից իսկ Իրանը առանձնահատուկ էր դեր ուներ կուսակցության գործունեության համար, որ հետագայում էլ ավելի կարևորվեց: Իրանը նույնիսկ նախքան Դաշնակցության հիմնումը հայ մյուս կուսակցությունների համար, ինչպես Արմենակյանը և Հնչակյանը, տարանցիկ ուղի էր դեպի Արևմտյան Հայաստան: Այս խմբերը գինամթերքի պահեստներ ունեին Մալմաստում և Մակվում: Մալմաստում գտնվող Դարիքի մատուռը համարվում էր Արևմտյան Հայաստանի հետ կապող կայան:³⁵ Այս առումով Իրանը համարվում էր կամուրջ Օսմանյան կայսրությունում տեղակայված մարտիկների համար: 1891 թ. Դաշնակցականները Թավրիզում հիմնեցին առաջին զինագործական արհեստանոցը: Ռուսաստանից և Կովկասից այս արհեստանոց տեղափոխելով անհրաժեշտ իրեր՝ նրանք պատրաստում էին զենքեր և ուղարկում Արևմտյան Հայաստանը: Այս արհեստանոցի ղեկավարը Տիգրան Ստեփանյանն էր:³⁶ Այսպիսով Իրանն ուներ աչքի ընկնող հայ համայնք, որին մոբիլիզացնելով, դաշնակցականները կարող էին օգտագործել իրենց պայքարներում, ինչպես և արեցին կուսակցության հիմնումից հետո Մակուի, Խոյի և Մալմաստի շրջաններից մեծ թվով մարտիկների իրենց շարքերում ընդգրկելով:

Իրանում ժողովրդական բողոքների ավելացման հետ և սահմանադրական հեղափոխության ձևավորմամբ Ատրպատականի մասնաճյուղի և կուսակցության որոշ ղեկավարների, ինչպիսին էր Ռոստոմը (Ստեփան Ջորյան), առաջարկով կուսակցության կարևորագույն խնդիրը դարձավ Իրանի հեղափոխությանը մասնակցություն բերելու հարցը:³⁷ Կովկասում և միջազգային դիվանագիտության ոլորտում տեղի ունեցած փոփոխություններն էլ ավելի կարևորեցին այս մասնակցությունը: Ցարական իշխանության տակ գտնվող Կովկասյան տարածաշրջանում Ստոլիպինը դիկտատուրա էր հաստատել: Ցարական ռեժիմից ետ չէր մնում նաև Օսմանյան սուլթան Աբդուլ Համիդի քաղաքականությունը: 1908թ. երիտթուրքերի հեղափոխության հաղթանակը և դաշնակցականների հուսախաբությունը այդ իրադարձություններից նրանց՝ Իրանի հեղափոխությանը միանալուց զատ այլ ելք չէր թողնում, հատկապես և երբ շահի կողմից մեջլիսի գնդակոծման և հեղաշրջման արդյունքում փոքր բռնատիրություն հաստատումից հետո, Իրանը դարձավ վերագգային ուժերի համագործակցության ճակատ: Մի կողմից, Կովկասում դաշնակցականների գործունեությունը ցարական իշխանությունների հսկողության տակ լինելը, մյուս

³⁵ Shakeri Kh., նշվ. աշխ., էջ 222:

³⁶ Վարանդյան Մ., Հայ հեղափոխական դաշնակցության պատմություն, Թեհրան, Ալիք, 1981, հ. 1, էջ 123:

³⁷ Manukian A., նշվ. աշխ., էջ 95:

կողմից Օսմանյան կայսրությունում պայքարի տեղ չմնալու պարագայում, ներկայությունն Իրանում համարվում էր դաշնակցական գործերի պիտանելիությունը փորձարկելու կարևորագույն փորձաշրջան:

Այս տեսակետից հարմար առիթ ստեղծվեց 1908թ. Սաթարխանի գլխավորությամբ ծագած Թավրիզի ապստամբության ժամանակ: Ռոստոմը կրկին անգամ գործուղվեց Իրան և Սաթարխանի հետ բանակցությունների արդյունքում վճռվեց, որ դաշնակցականները կմասնակցեն այս ապստամբությանը՝ մատակարարելով անհրաժեշտ զենք և զինամթերք:³⁸

Թեև ապստամբությունը պարտություն կրեց, սակայն շատ դաշնակցականներ, այդ թվում Քեռին, միացան Եփրեմ խանին Գիլանի ապստամբությանը մասնակցելու նպատակով:

Եփրեմ խանը իրավամբ համարվում է Իրանի սահմանադրական հեղափոխության ամենակարկառուն դեմքերից մեկը: Սկզբնական շրջանում նա Գիլանում դաշնակցականների առաջնորդն էր: Գիլանի ապստամբության հաջողությունից հետո և դրան հաջորդած Թեհրանի գրավումը, որում Եփրեմը գլխավոր դերակատարություն ունեցավ, բարձրացրին նրա հեղինակությունը ոչ միայն իր կուսակիցների առջև, այլև ամբողջ Իրանում նա սկսվեց դիտվել որպես իսկական հեղափոխական առաջնորդ:

1909թ. Թեհրանի գրավմամբ ավարտվեց Մոհամմադ Ալի շահի «փոքր բռնապետության» շրջանը, երբ հիշյալ շահը գահընկեց արվեց: Հիմնվեց նոր կառավարման օրգան, որ կոչվում էր «Բարձր մեջլիս» և բաղկացած էր 500 անդամներից: Իրանահայերից այս նոր կառույցում ընդգրկվել էր Թավրիզի հայ համայնքից Միրզայանցը, որը հետագայում դարձավ նաև իրանահայերի ներկայացուցիչը Ազգային մեջլիսում:³⁹ Ձևավորվեց ժամանակավոր կառավարություն՝ Սեփահդարի գլխավորությամբ, որտեղ Սարդար Ասադը նշանակվեց ներքին գործերի նախարար, իսկ հայազգի դաշնակցական Եփրեմ խանը՝ Թեհրանի ոստիկանության ղեկավար:⁴⁰ Եփրեմին այս պաշտոնը հանձնվեց Թեհրանի գրավման գործում ունեցած մեծ վաստակի և ցուցաբերած քաջության համար:

Եփրեմ խանի հետագա գործունեությունը պատճառ դարձավ, որ Իրանի պատմության մեջ նա մնա որպես շատ հակասական մի կերպար: Երբ նա հաղթանակ էր տանում Գիլանում, Թեհրանում, ապահովում էր երկրի անվտանգությունը և պահպանում հեղափոխության ձեռքբերումները, ճնշում էր ապստամբած ցեղերին, չեզոքացնում էր հաղթանակած հեղափոխականների միջև հակասությունները, արժանանում էր ժողովրդի և նույնիսկ իրանցի շիա հոգևորականության հարգանքին և պատվին: Սակայն երբ իրավիճակից դրդված Սաթար խանի դեմ դուրս եկավ և ռուսների վերջնագրի արդյունքում հարկադրված փակել սվեց երկրորդ գումարման մեջլիսը, ինչպես նաև

³⁸ Khalatyan H., նշվ. աշխ., էջ 42:

³⁹ Malekzade M., Tarikhe Mashrutiyate Iran, Tehran, 1371/1992, v. 6, p. 1237.

⁴⁰ Иванов М.С., История Ирана, Москва, 1977, стр. 284.

դաժանորեն պատժեց իր հակառակորդներին, մասնավորապես Աթաբաքի այգում տեղի ունեցած հայտնի իրադարձությունից հետո, Եփրեմը թշնամանքի թիրախ դարձավ իրանական հասարակության տարբեր շրջանների կողմից և նույնիսկ նրան վերագրվեցին այնպիսի որոշ գործողություններ, որոնցում Եփրեմի դերը լուրջ կասկածի տեղիք է տալիս: Այդպիսին էր օրինակ հայտնի հոգևորական շեյխ Ֆազլլահ Նուրիի մահապատժի գործում նրա մասնակցությանը վերաբերող մեղադրանքները: Մակայն աղբյուրների անկողմնակալ և ճշգրիտ ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ Եփրեմը այս իրադարձություններում որևէ դերակատարություն չի ունեցել: Բացի այդ հաշվի առնելով Եփրեմի որդեգրած կրոնական հակասություններին չմիջամտելու և դրանց ներթափանցումը քաղաքական և հասարակական ոլորտներ կանխելու քաղաքականությունը,⁴¹ կարելի է եզրակացնել, որ Շեյխ Նուրիի սպանությունը չէր կարող բխել այդ տրամաբանությունից և կամ նպաստել Եփրեմի հեղինակության բարձրացմանը: Հենց ինքը Եփրեմը իր հուշերում Շեյխ Նուրիին մեծ հարգանքով է հիշատակում և նշում, որ նրա ձեռքակալությունը, դատը և մահապատիժը մոջահեդական խմբերի գործն էր, և ինքը այդ իրադարձությունների հետ որևէ կապ չի ունեցել: Այս մասին է վկայում նաև սահմանադրական հեղափոխության վերաբերյալ գրած կարևորագույն պատմագիրներից Մալեքզադեն⁴²:

Եփրեմի հակասական կերպարը պատճառ դարձավ, որ նրա և դաշնակցության միջև ևս անդառնալի հակասություններ ծագեցին և դրանով ավարտվեց ոչ միայն Եփրեմի կուսակցական գործունեությունը, այլև դաշնակցության հեցացումը Իրանի նոր իշխանական համակարգից և նրա ազդեցության թուլացումը հեղափոխության պարտության պայմաններում:

Եզրակացության մեջ ամփոփելով ուսումնասիրությունը Իրանի սահմանադրական հեղափոխությունում հայերի դերակատարության վերաբերյալ ատենախոսք կատարել է հետևյալ եզրահանգումները.

- Հայերը հնուց ի վեր և հատկապես Մեֆյան շրջանից սկսած կարևոր ազգային և մշակութային համայնք են համարվել Իրանում: Մեֆյան շրջանից մինչև սահմանադրական հեղափոխություն հայերը օգտվել են զգալի տնտեսական և հասարակական արտոնություններից, ինչի արդյունքում սկզբնական շրջանում զգալի դեր են խաղացել երկրի տնտեսական կյանքում, իսկ արդեն Ղաջարական շրջանում կենտրոնացնելով և ճիշտ օգտագործելով իրենց ռեսուրսները կարողացել են զգալի դեր ունենալ քաղաքական կյանքում և իրանական հասարակությանը նոր եվրոպական արժեքներով և գաղափարներով ծանոթացնելու գործում:

- Հայ ականավոր գործիչ Միրզա Մալքում խանի և նրա համախոհների ներդրումը սահմանադրական հեղափոխության նախապատրաստման գործում անհերքելի է:

⁴¹ Abadian, Hosein, Bohrane Mashrutiyat dar Iran, Tehran, 1383/2005, p. 388.

⁴² Malekzade, M., նշվ. աշխ., v. 6, p. 1259.

- Հայերը գործուն մասնակցություն են ունեցել ոչ միայն հեղափոխության նախապատրաստման, այլև անմիջական իրագործման փուլում: Թե՛ իրանահայերը և թե՛ Հայաստանի հայերը՝ տարբեր գաղափարախոսության կրողներ, հայկական կուսակցությունների անդամներ լինելով հսկայական դեր են խաղացել սահմանադրական հեղափոխության սկզբնական հաղթանակի գործում:
- Իրանահայերի հեղափոխությանը մասնակցելու հիմնական շարժառիթներից մեկը Իրանում ապրող այլ կրոնական և ազգային խմբերի հետ հավասար իրավունքների ձեռքբերումն էր:
- Իրանահայերը Իրանը դիտում էին որպես իրենց հայրենիք և թեև ուշացումով, բայց ամենակտիվ կերպով միացան հեղափոխականներին և կարելի է ասել, որ Իրանի ազգային և փոքրամասնություններից ամենագործուն մասնակցություն ունեցան հեղափոխությունում:
- Հայ ազգային կուսակցությունները, որ այս շրջանում ակտիվ գործունեություն էին ծավալում հեղափոխական թոհուրոհում հայտնված ամբողջ տարածաշրջանում, Իրանը դիտում էին որպես հարմար երկիր Արևմտյան Հայաստանում ազատագրական մարտեր կազմակերպելու համար անհրաժեշտ նախապատրաստական աշխատանքներ կատարելու և մինևույն ժամանակ իրանահայերին այդ պայքարում համախմբելու նպատակով:
- Թավրիզի հայ սոցիալ-դեմոկրատները և հատկապես նրանց ականավոր գործիչները կրթություն ստանալով Եվրոպայում և անմիջապես առնչվելով եվրոպական հասարակական-քաղաքական մտքի նոր նվաճումներին, ձգտում էին մտավոր և գաղափարական պայքարով Իրանում առաջ բերել մտածելակերպի, քաղաքական և տնտեսական ոլորտում համակարգային փոփոխությունների և երկիրը դուրս բերել միջնադարյան հետամնաց հասարակարգի ճիրաններից: Սակայն Իրանի խայտաբղետ մշակութային, էթնիկ կազմը և ազգային և կրոնական սովորույթները, զանազան քաղաքական ուժերի մրցակցություն ու քաղաքական անհեռատեսությունը ի չիք դարձրին այդ ջանքերը:
- Հնչակյան կուսակցությունն Իրանում իր հիմնական գործունեությունը ծավալեց Գիլանում, որտեղ էլ գտնվում էր կուսակցության գլխավոր կենտրոնը: Թեև ակտիվ պայքարին, սակայն հնչակյանները մրցակցելով դաշնակցականների հետ հիմնականում մնացին վերջիններիս ստվերում: Չնայած դրան կուսակցության առաջնորդ Գրիգոր Եղիկյանը իրավամբ դարձավ Իրանի սահմանադրական շարժման ականավոր դեմքերից մեկը: Նա իրանական քաղաքական մշակույթ ներմուծեց հանդուրժողականության և ազգերի խաղաղ համակեցության տարրեր, քննարկման առարկա դարձրեց կանանց իրավունքների պաշտպանության խնդիրը: Նա նպաստեց նաև Իրանում ժամանակակից արվեստի և հատկապես թատրոնի զարգացմանը՝ բեմադրելով իր իսկ հեղինակած քաղաքական բովանդակությամբ պիեսներն ու վեպերը:
- «Դաշնակցություն» կուսակցությունը և հատկապես Իրանում նրա առաջնորդ Եփրեմ խանը վճռորոշ դեր խաղացին սահմանադրական հեղափոխության

նախնական հաղթանակի, Թեհրանի գրավման և հետհեղափոխական Իրանում անվտանգության և կայունության հաստատման, սահմանադրական արժեքների պահպանման, տեղերում ծագած բազմաթիվ ըմբոստությունների ճնշման գործում:

Չնայած իր հակասական կերպարին և գործելակերպին, Եփրեմը խանին իրավամբ կարելի է համարել «Դաշնակցություն» կուսակցության պատմության և Իրանի սահմանադրական շարժման ամենակարկառուն գործիչներից մեկը:

• Իրանի սահմանադրական հեղափոխության պարտությունը մեծ հարված էր ոչ միայն իրանահայերի ազատենչ հույսերին, այլև հայ կուսակցությունների ազդեցությանը Իրանում:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԴՐՈՒՅԹՆԵՐԸ ՇԱՐԱԴՐՎԱԾ ԵՆ
ՀԵՂԻՆՏԱՎԻ ՀԵՏԵՎՅԱԼ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐՈՒՄ

1. Eprem Khan and the Constitutional failure in Iran, Iran and the Caucasus, Brill, Leiden, Boston, 12.2, 2008, pp. 377-384.
2. Участие Ефрем-хана в иранской конституционной революции 1905-1911 гг., «Օրինտալիս», # 9, 2009, էջ 67-70:
3. Եփրեմ խանը՝ որպես Թեհրանի ոստիկանության (Նազմիե) ղեկավար, «Օրինտալիս», # 10, 2010, էջ 110-115:

УЧАСТИЕ АРМЯН В КОНСТИТУЦИОННОЙ РЕВОЛЮЦИИ ИРАНА (1905-1911)

Диссертация на соискание ученой степени кандидата исторических наук по специальности 07.00.01 “История Армении”.

Защита состоится 13-го декабря 2011 г., в 14⁰⁰ по адресу: 0019, г. Ереван, пр. Маршала Баграмяна 24/4, на заседании специализированного совета 004 при Институте Истории НАН РА.

РЕЗЮМЕ

Изучение вопроса участие армян в конституционной революции Ирана (1905-1911) имеет важное политическое и научное значение. Многостороннее и глубокое исследование роли армян в этом ключевом событии в современной истории Ирана имеет важное значение не только в рамках армяно-иранских исторических связей, но и выступает в качестве новой оценки и анализа деятельности всех армянских общественно-политических групп и партий в Конституционной революции Ирана в одной исследовательской работе.

Несмотря на нехватку источников на эту тему, автор старался привлечь различные виды основных источников особенно мемуары, письма и документы этого периода, чтобы пролить свет на исторических событий и, особенно, показать реальная роль армян в этом движении. Этот вопрос имеет большое значение, принимая во внимание тот факт, что эта тема в последнее время стала предметом неправильной оценки особенно в иранских научных кругах. С другой стороны, впервые основные источники на персидском по этой тематике, особенно документы и письма вводятся на армянские научные круги.

Объективное и глубокое изучение этих источников показывает не только многостороннее участие традиционных армянских политических партий в Конституционной революции Ирана, но и некоторых новых политических групп, таких как армянские социал-демократы из Тебриза, реальная роль которых в распространении социал-демократической идеологии в Иране еще не стал предметом научных исследований. Это диссертация также предоставляет новый и глубокий анализ роли дашнаков и Ефрем Хана в революции, а в первые указывает на значительную роль Гнчаков и особенно их лидера Григор Егикяна в пропаганде и продвижению революционных идей в Гиляне и в Иране в целом. Все это имело цель показать реальную большую роль армян в политической и социально-экономической модернизации Ирана.

Диссертация состоит из введения, четырех глав, заключения и библиографии. Во введении обосновывается актуальность, теоретическая и практическая

значимость темы, а также её научная новизна, определяются цели, задачи и методология исследования, делается краткий обзор использованной литературы.

Первая глава диссертации «Армянская община Ирана на пороге конституционной революции» посвящена изучению вопросов касающихся глубокой вовлеченности армян как в общественно-политической, так и в экономической жизни в Иране со времен Сефевидов, состояния армян во время хрупкий политический период 18-го века в Иране, тесных связей армян с Каджарским правительством и их колебанию присоединиться к Конституционному движения в первой фазы революции.

Вторая глава «Роль армянских социал-демократов в Конституционном революции Ирана» посвящена изучению важного вклада, который два армянских социал-демократической группы во главе с Чилингарян и Васо Хачатрян (первая группа) и Седрак II (вторая группа) имели в распространении социал-демократических идей в традиционном обществе Ирана. А также рассматривается вопрос роли армянских социал-демократов в формировании Демократической партии Ирана который сыграл ключевую роль в революции, и некоторые политические статьи, написанные Тигран Дарвиш и его роль в формировании газеты "Иране Ноу".

В третьей главе "Роль "Гнчаков" в Конституционном революции Ирана" на рассматривается вопросы касательно первых шагов " Гнчаков " в вовлечении в революционной деятельности и выбор иранского области Гилян как плодородной почвы для распространения своих идей и влияния. В этой главе особое внимание обращается роли лидера Гнчаков Егикяна в мирной пропаганде и продвижения социал-демократических идей в Иране с его деятельностью в качестве сценариста и продюсера театральных представлений. В отдельной части рассматриваются идеи Егикяна по решению Армянского вопроса в рамках ирано-армянских исторических и политических отношений.

Четвертая глава "Роль "Дашнакцутюн" в Конституционном революции Ирана" посвящена изучению первых мероприятия "дашнаков" для помощи революционному движению, их значительную роль в восстании Тебриза и перевод центра их революционной деятельности из Тебриза в Гилян. В этой главе в отдельных частях рассматривается деятельность и роль Ефрем Хана в различных фазах и событиях Конституционного движение Ирана.

В Заключении обобщаются основные выводы и положения, выносимые на защиту.

JALALI SEYYED SAID SEYYED HAMZE
ARMENIANS' PARTICIPATION IN THE CONSTITUTIONAL REVOLUTION OF
IRAN (1905-1911)

Dissertation for the degree of the Doctor of History on the specialization of "History of Armenia" 07.00.01.

The defense of the dissertation will be held on December 13, 2011, 14⁰⁰, at the session of the Specialized Council 004 by the Institute of History NAS RA. (Yerevan, Marshal Baghramyan ave. 24/4).

SUMMARY

The study of the "Armenians' participation in the Constitutional revolution of Iran (1905-1911)" topic has both scientific and political significance. Although shortage of the sources on the topic the author tried his best to involve various kinds of main sources especially the memoirs, letters and documents of the period to shed light on and introduce the historical events and especially the real role of Armenians in this movement. This issue is of great importance taking into consideration the fact that this subject has somehow been a matter of wrong evaluation and underestimation especially in the Iranian scientific circles. On the other hand for the first time due to this research, new Persian main sources on the topic especially documents and letters are being introduced to the Armenian scientific circles.

The objective and in depth study of these sources shows not only the multipartite participation of traditional Armenian political parties but also some new political groups such as Armenian social-democrats of Tabriz, the real role which in spreading social-democratic ideology in Iran yet hasn't become a subject of scientific research. This thesis also provides a new and in depth analysis of the role of Dashnaks and Eprem Khan in the revolution, as well as for the first indicates the significant role of Hnchaks and especially their leader Grigor Yeghikyan in the propaganda and promotion of revolutionary ideas in Gilan and Iran as a whole.

The PhD thesis consists of introduction, four chapters, conclusion and bibliography. Introduction illustrates the importance of the thesis, its aims and subjects, theoretical and practical aim of the thesis. It also includes the bibliography review, the methodical base and scientific novelty.

The first chapter of thesis "The Armenian community of Iran on the threshold of Constitutional revolution" consists of four sub chapters. The first and second sub chapters "The role of Armenians in the social-economic life of Iran" and "The period of political instability and harms suffered by the Armenian community" shows the profound involvement of Armenians in the social-political as well as in the economic life of Iran since the Safavid period and with the state of Armenians during the fragile political period of the 18th century in Iran. The third and the fourth sub chapters "The strengthening of the economic and social position of Armenian community in Qajar period" and "The start of Constitutional revolution and the Armenian community of

Iran" shows the close ties of many Armenians with Qajar government and the hesitation of them to join the Constitutional movement in the first phase of the revolution.

The second chapter "The role of Armenian social-democrats in the Constitutional revolution of Iran" consists of three sub chapters. The first sub chapter "Armenian social-democrats of Tabriz" focuses on the important contribution that the two Armenian social-democrat groups led by Chilingaryan and Vaso Khachatryan (first group) and Sedrak II (second group) have had in the spread of social-democratic ideas in the traditional society of Iran. The second sub chapter and the third sub chapters "The Democratic party of Iran and the social democrats of Tabriz" and "'Irane Nou" newspaper and publicist activity of Tigran Darvish" shows the role of Armenian social-democrats in the formation of Democratic party of Iran that played a key role in the revolution as well as Tigran Darvish's role in the formation of this news paper.

The third chapter "The role of "Hnchaks" in the Constitutional revolution of Iran" consists of four sub chapters. The first and the second sub chapters "The activity of the "Hnchaks" during the first period of the Constitutional movement" and "Social-democrats of Gilan" focuses on the first steps of "Hnchaks" in involving in the revolutionary activities and the choosing Iranian region of Gilan as a fertile arena to spread their ideas and influence. The third and fourth sub chapters "The political thought and activities of G. Yeghikyan the head of "Hnchak" party during the Constitutional revolution of Iran" and "Yeghikyan's role in the social-political life of Iran" focuses on the great role of Hnchak leader Yeghikyan in the peaceful propaganda and promotion of social-democratic ideas in Iran with his activities as play writer and producer of theatre plays.

The fourth chapter "The role of "Dashnaktsutyun" in the Constitutional revolution of Iran" consists of ten sub chapters. The first and the second sub chapters "'Dashnaktsutyun"'s joining the Constitutional revolution of Iran and participation in Tabriz revolt" and "'Dashnaktsutyun" in Gilan" focuses on the first activities of "Dashnaks" during the revolution, their significant role in Tabriz revolt and replacement of the center of their revolutionary activities from Tabriz to Gilan. From the third to tenth sub chapters that are named correspondingly "Eprem khan's activity in the first phase of the Constitutional revolution of Iran", "The invasion of Tehran by the Constitutional forces", "Eprem Khan as a head of Tehran police", "The role of Eprem khan in the execution of Sheikh Fazlollah Nouri", "The local revolts and the role of Eprem", "Eprem khan's activity from the event of "Atabak" park till the ultimatum of Russians", "The dissolution of the second Majles and Eprem's role in the failure of the Constitutional revolution of Iran" and "The rise of discord between "Dashnaktsutyun" and Eprem khan and end of Eprem's activity" a profound and objective analysis of Eprem's role in different phases and events of the Constitutional movement of Iran has been made.

Conclusion summarizes the main results of the thesis based on the clarifications of main problems.